ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

01.07.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 541-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՀԵՐ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 46-րդ, 481, 60-րդ, 57-րդ, 76-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286, 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896, Գորիս համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի թիվ 20-Ա որոշումների,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող, Գորիս քաղաքի Արցախյան խճուղի 55 հասցեի հարևանությամբ (համաձայն սխեմայի) գտնվող ընդհանուր օգտագործման հողերից 1 քմ հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Մհեր Շահնազարյանին՝ բացառապես ոչ հիմնական շինություն՝ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատ (սուրճի, գազավորված ըմպելիքների և այլ սննդամթերքի) սարք տեղադրելու նպատակով:
2. Մհեր Շահնազարյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1 /մեկ/ տարի ժամկետով՝ 36000 (երեսունվեց հազար) ՀՀ դրամ տարեկան վարձավճարով:
3. Կնքվող պայմանագրում նախատեսել, որ տարեկան վճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակ՝ հավասար չափերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 01

ք. Գորիս